**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 3**
**№ ԾՀԱՊՁԲ-7/5-3 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

ք. Երևան 13 . 02. 2018թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և "Մաստերֆուդ" ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Կ. Հարությունյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, հիմք ընդունելով 09.03.2016թ. կնքված № ԾՀԱՊՁԲ-7/5-3 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 1.2 և 9.2 կետերը փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

**1. Համաձայնագրի առարկան**

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի № 1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես սեփականություն հանձնել Պայմանագրիի № 1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի սննդամթերք (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

**2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը**

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի յուրաքանչյուր միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է **15 148 980 (տասնհինգ միլիոն մեկ հարյուր քառասունութ հազար ինը հարյուր ութսուն) ՀՀ դրամ**, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 4.2 կետին համապատասխան, բայց ոչ ուշ քան 10.12.2018թ.:

**3. Այլ պայմաններ**

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի № 1, № 2 Հավելվածները՝ բաղկացած են 1 թերթից, հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

**4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ք. Երևան, Բագրևանդի 5<br>ՀՀ ֆինանսների նախարարության<br>աշխատակազմի գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011144079<br>ՀՎՀՀ 00867415<br>ՀՀ պաշտպանության նախարարության<br>ՆՏԱ դեպարտամենտի պետ ՊԺԿ<br><br>Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ | «Մաստերֆուդ» ՍՊԸ<br>ք. Երևան, Ավան, Իսահակյան թաղ. 4շ. բն.29<br>«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ,<br>Հ/Հ 1150010141621625<br>ՀՎՀՀ 00877786<br>տնօրեն<br><br>Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ |

Հ/Հ ... անձ. AK0223380

Հավելված N 1
№ ՇՀԱՊՁԲ-7/5-3 գնման պայմանագրի N 3 համաձայնագրի

**ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

| Հ/հ | Գնման առարկան | Չ/մ | Քանակ | Մեկ միավորի գինը /ՀՀ դրամ/ | Ընդհանուր Գումարը /ՀՀ դրամ/ | Ապրանքների մատակարարումը ըստ ամիսների 2018թ. | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր |
| 1 | պահածոյացված պոմիդոր /Կարմիր լոլիկ սեփական հյութում/ | կգ | 36069 | 420 | 15148980 | 12000 | 12000 | 12069 |
| **Ընդամենը** | | 15 148 980 (տասնհինգ միլիոն մեկ հարյուր քառասունութ հազար ինը հարյուր ութսուն) ՀՀ դրամ | | | | | | |

Հավելված N 2
№ ՇՀԱՊՁԲ-7/5-3 գնման պայմանագրի N 3 համաձայնագրի

**ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

| Հ/հ | Գնման առարկան | CPV-ի կոդը | *Նախատեսվում է ֆինանսավորել 2018թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2018թ | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր |
| 1 | պահածոյացված պոմիդոր /Կարմիր լոլիկ սեփական հյութում/ | 15331173/3/10/3 | 5040000 | 10080000 | 15148980 | 15148980 |

* *Վճարման ենթակա գումարը ներկայացված է աճողական կարգով:*

| **ԳՆՈՐԴ** | **ՎԱՃԱՌՈՂ** |
|---|---|
| ք. Երևան, Բագրևանդի 5 | «Մաստերֆուդ» ՍՊԸ |
| ՀՀ ֆինանսների նախարարության | ք. Երևան, Ավան, Իսահակյան թաղ. 4շ. բն.29 |
| աշխատակազմի գործառնական վարչություն | «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, |
| Հ/Հ 900011144079 | Հ/Հ 1150010141621625 |
| ՀՎՀՀ 00867415 | ՀՎՀՀ 00877786 |
| ՀՀ պաշտպանության նախարարության | տնօրեն |
| ՆՏՏ դեպարտամենտի պետի ՊԺԿ | |
| Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ | Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ |

Հ/Կ. Հ. Հարությունյան
անձ. AK0283380